

5017  
5018  
5019  
5020

Պրոլետարներ լուրը յերկրները — միացե՛ք!

## ԲԱԼԹԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Է ԿՆՈՒՆՅԱՆ  
ՆԵ ԳՈՐԾՈՒՆՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2. ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԳՍՏՐԵԱՆ
3. ՅԵՐԵՎՈՒ ՏԵՍԱԿԵՑ ԳՅՂՈՒ-  
ԹՅԱՆ ԿՆԳՐԱՆԵՐՈՒԹՅՈՒՆ
4. ԱՐԵՎԿԱ ԶՈՐԱՆՅԱՆ

3K719

Ն-84

ԹԻՖԼԻՍ — 1927

## ԲԱԼՇԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Հեղափոխական եմիգրացիայի յեզ ուսանողութեան անցյալից (մի և՛ Ստ. Շահումյանի յեզ Բողղան Կնունյանի գործունեութիւնից) . . . . . 25 կ.
2. Սուրեն Սպանդարյան . . . . . 25 »
3. Յերկու տեսակետ գաղութահայ խնդիրներում 25 »
4. Արշակ Զուրաբյան . . . . . 25 »

ԲԱԼՇԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

Պրոլետարներ բոլոր յերկրների - միացե՛ք!

Է. ՍՈՒՐԵՆ

**ՅԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏ  
Գ Ա Ղ Ո Ւ Թ Ա Հ Ա Յ  
ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ**

ԹԻՖԼԻՍ — 1927

ԲՍԼՇԵՎԻԿԵ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

Պրոխաորներ բոլոր յերկրների - միացե՛ք!

20707

Ե. ՍՈՒՐԵՆ

**ՅԵՐԿՈՒ ՏԵՍԱԿԵՏ  
ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ**



**Ե. Տյրեն**

Две точки зрения.

**Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Ս Գ .**

Մեր գրականության մեջ գոյություն ունի յերկու տեսակետ գաղութահայ խնդիրների հանդեպ.—

մեկը—ծեփափորված ընկ. Ա. Մարտունի-Մյանիկյանի «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքույկում.

մյուսը—արտահայտած ընկ. Աշոտ Հովհաննիսյանի «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում:

Այդ յերկու տեսակետների վերլուծության նվիրված մեր քննադատականներն են, վոր տալիս ենք այստեղ: Նրանք տպագրված են յեղեկ 1925 թվին Բագվի «Կոմունիստ»-ում:

Ե. Ս.



## ԿԱՐԵՎՈՐ ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Կուսակցությունները զաղութանայության մեջ»)

### 1.

Կոմունիստական կուսակցությունները մյուս յերկրներում իրանցից ներկայացնում են դեռևս յերիտասարդ մարմիններ: Ճիշտ է, համեմատաբար սոցիալ-րեֆորմիստական կուսակցությունների և ընդհանրապես մյուս քաղաքական համախմբումների հետ՝ նրանք թեև այսօր էլ արդեն շատ տեղերում թե թվով և թե վորակով յերկրի առաջնակարգ կազմակերպություններ են, — բայց պահանջում և դարձյալ շատ աշխատանք ու հեղափոխական համառ մարզանք տալու արասասանմանյան կոմունիստական կուսակցություններին այն ույժն ու կորովը, վոր ունի մեր Վեկապերեն — ВКП(б):

Պատճառները շատ են: Յեւ յայդ պատճառների մեջ վերջին տեղը չէ բռնում այն, վոր նորակազմ կոմունիստական կուսակցություններից շատերը չէն կարողացել ամբողջապես ազատվել յեվրոպական յերկրներում տիրող մինչպատերազմական սոցիալիստական տրադիցիաներից կամ Յերկրորդ Իստերնացիոնալի ժառանգությունից:

Կոմունիստական կուսակցությունների միջուկը արասասանմանում կազմված լինելով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ձախ, հեղափոխական

թևի անջատումից, — նրա զեկափարությունը հաճախ իր հետ եր բերել պայքարի այնպիսի մեթոդներ, վորոնք հարազատ չեն բալչեիզմին: Իրանով պետք է բացատրել այն ներքին ճգնաժամերը, վորոնք տեղի ունեցան վերջին տարվա ընթացքում գերմանական, ֆրանսիական, իտալական, չեխո-սլավական, շվեդական կոմունիստական կուսակցությունների շարքերում և վորոնց լիկվիդացիայով բավական մանրակրկիտ կերպով զբաղվեց մեր կոմիստերնը:

Հասկանալի պատճառով կոմիստերնը իր հերթական խնդիրներից մեկն է դարձրել իր սեկցիաների բալչեիկանացումը, վոր ասել է՝ լենինիզմի հիմունքների յուրացումը մյուս յերկրների կոմունիստական կազմակերպությունների կողմից:

Նախկին «հեղափոխական» ու «սոցիալիստ» կուսակցությունների կազմալուծումը և նրանց խակապես հեղափոխական ու անչակերտ սոցիալիստ տարրերի համախմբումը կոմունիզմի դրոշակի տակ՝ կատարվում է նաև արտասահմանյան հայկական կազմակերպությունների մեջ: Այդ կազմալուծման ու վերակազման պրոցեսի վերլուծման, ինչպես նաև նրա խորացման ու շեշտման է նվիրված ընկ. Ա. Մարտունի-Մյանսիկյանի վերջին աշխատությունը՝ «կուսակցությունները պաղութահայության մեջ» վերնագրով:

Մենք կուզեյինք կանգ առնել մի յերկու յեղրակացության վրա, վոր անհրաժեշտաբար բղիտում է այդ հրատարակության ընթերցումից, և վոր առանձնապես կարևոր է թվում մեզ:

## II.

Մինչ-հոկտեմբերյան Հայաստանը շարունակ իր աչքերը հառած է ունեցել «արտասահմանյան հայության» կամ «հայկական գաղութներին» վրա: Յեվ դա շատ բնական է յեղել: Նման վերաբերմունքը ուղղակի բղխել է դաշնակցական իշխանության ուղղակի բուրժուական բնույթից: Վերջինս յերբեք էլ վստահություն չէ տածել գեպի մեր բանվորն ու գյուղացին և իր հաշիվները շարունակ կառուցել է զրսի ույժերի վրա՝ անգլո-ֆրանսիական «բարեկամության» և գաղութահայության «ոժանդակության»: Իրանով պետք է բացատրել մասամբ այն հեշտությունը, վորով դաշնակ ջոջերը հրաժարվեցին հայրենիքի գերազանցապես տերրիտորիալ հասկացողությունից և հարեցին «անհայրենիք հայրենիքի» չքնաղ գաղափարին:

Այդ ուղղակի բուրժուական իշխանության եյությունից եր բղխում և այն գործելակերպը, վոր՝ այն ժամանակ, յերբ հայ ժողովուրդը ապրում էր Արարատյան դաշտի վրա, նրա բախտը տնորինվում էր արտասահմանյան կաֆեների սեղանների շուրջը և այս կամ այն յեվրոպացի «մեծ հայասերին» և դիվանագետի նրբանցքերում, վորտեղ խճողված էյին Ահարոնյան, Նուբար-փաշա և այլ հայ-քրիստոնյա յերեկելիներ: Հայաստանի քաղաքական կյանքի առանցքը Յերևանը չէր, այլ Փարիզը և Լոնդոնը, վորտեղից սպասվում էյին դիրեկտիվներ, հրաշքներ:

Այլ կերպարանք ունի այսօր Հայաստանը, վոր նույնպես հետևանք է մեր իշխանության բանվոր-գյուղացիական կամ Սորհրդային բնույթի:

Արտասահմանյան գաղութահայությունը վորպես անշերտավոր ամբողջություն մեզ համար գոյություն չունի: Մա մեկ: Հետո՝ մեր աչքերը մեխված չեն այն-տեղի ունեւորության սիրալիրության վրա:

Ինչպես ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանն և ասում իր «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքույկում. —

«Յեթե արտասահմանում կան հայ հարուստ-ներ, վորոնք ուզում են Հայաստանում շահնեցնել իրանց գրամները, ճահիճները չորացնել և առու-ներ անցկացնել, թող անեն: Չե՞ վոր դա պայմա-նագրության հարց և, սեալ գործի և հաշվի խնդիր և: Յուրաքանչյուր Սորհրդային յերկիր պատ-րաստ և կապիտալիստներին կոնցեսիաներ տա-լու» (եջ 22):

Մեզ ավելի չե հետաքրքրում հայ ունեւորը, քան մի այլ ունեւոր-կոնցեսիոններ, մանավանդ վոր այսոր պարզից ավելի պարզ և, թե գաղութահայ մեր ջո-ջերը Սորհրդային իշխանության գեղեցիկ աչքերի համար չե, և վոչ էլ առանձին «ազգասիրական» թու-լության, վոր ուզում են «ճահիճները չորացնել և առուներ անցկացնել»: Խնդրի այս կողմն էլ արդեն բավական մերկացած և և բոլորիս հայանի յե գաղու-թահայ ունեւորության «անշահախնդրության» չափը:

Այսպես գնահատելով գաղութահայ ունեւորու-թյան դերը և տեղը, բնական և, վոր մենք մերժում ենք կարուկ կերպով այն հերյուրանքը, թե Սորհր-դային Հայաստանը նյութական ակնկալիքներ ունի գաղութներին: Ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանը

շատ տեղին նկատում և հայ բանվորի ու գյուղացու յերգվյալ թշնամիներին. —

«Վոչ, պարոնայք գաշնակցականներ: Փո-ղային հաշիվներով գրազվեցեք գուք: Դա ձեր փեշակն և: Իսկ Սորհրդային Հայաստանի մասին ասացինք, վոր նա չունի նյութական ակնկա-լություն գրսից: Նրա հույսը իր բազուկներն են, իր աշխատանքն և: Սորհրդային Հայաստանը բանվոր-գյուղացիական յերկիր և» (եջ 21):

Մեր վերաբերմունքը, կոմունիստական տեսա-կեալը դեպի գաղութահայ ունեւորությունը շատ պարզ բնորոշած և: Նա միջազգային բուրժուազկալի անբա-ժան և մի մասնիկն և միայն: Վոչ-ավելի:

### III.

Բայց բացի հայ բուրժուազկալից, բացի Նու-բար-վաշաներից, Պոյաճյաններից, Կյուլպենկյաննե-րից և նմաններից, — գաղութներում կա սովորաթիվ հայ աշխատավորություն: Հենց միայն Ամերիկայում հայ բանվորության թիվը հասնում և 40—50 հազարի: Փորվի գործարանում աշխատում են հազարավոր բան-վորներ. Չիկագոյի հայանի սպանդանոցում հայ բանվոր-ների թիվը հարյուրներով և հաշվում: Յեկրոպական և ամերիկյան կապիտալի համար հայ գաղթականը մի բա-վական ցանկալի ու համեզ պատաս և: Լինելով կուլ-տուրպիս շատ ավելի ցած ու ավելի անդիտակ իր դասակարգային շահերին, հայ աշխատավորությունը հաճախ շորեյկբրեխերի դեր և կատարում արտասահ-մանյան կապիտալիստի ձեռնարկներում:

Այն հանգամանքը, վոր այսօր Հայաստանում Նորհրդային իշխանութունն է, չի կարող իր ներգործական դերը չունենալ գաղութահայ աշխատավորութեան դասակարգային դիտակցութեան սթաիմանն և հեղափոխական կորովի ամրապնդման գործում: Ընդհանրապես Նորհրդային Միութեան գոյութեան փաստը ինքնին արդեն մի բնական գորեղ խթանն է միջազգային հեղափոխական շարժման արագացման:

Բայց կոմունիստական կուսակցութունը «ագային» կուսակցութունն չէ և մանավանդ նման չէ մեզ քաջ հայտնի հնչակյան և դաշնակցական կուսակցութուններին, վորոնց հասկանիչ կողմերից մեկն է պանարմենիզմը: Այսօր, յերբ գաղութներում դաշնակ ու հնչակ կազմալուծվող շարքերից կոմունիզմին են անցնում հայ բանվորներ, վերջիններիս առանձնապես լավ պետք է հիշեն այդ հանգամանքը և իրենց հետ չբերեն սովորութուններ, վորոնցից դիտակնացած անցյալի բուրմունքն է գալիս: Իսկ զրա համար անհրաժեշտ է, վոր դաշնակի ու հնչակի խավարից ազատագրված բանվորը անմիջապես կապվի Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Բոլղարիայի և մյուս յերկրների կոմունիստական տեղական կազմակերպութուններին հետ:

Ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանը շատ լավ է անում, վոր առանձնապես ընդգծում է այդ հանգամանքը իր գրքույկում (եջ 126).—

«Այն ժամանակ, յերբ դաշնակցութունը հեռու յն պահում իրան տեղական աշխատավորութունից, հայ աշխատավորները չեն կարող ապրել ու զարգանալ առանց յեղբայրական կապի

և բարեկամական ոգնութեան, վոր նրանք ստանում ու տալիս են տեղական պրոլետարներին: Ամերիկայի հայ կոմունիստական կազմակերպութունը Ամերիկայի Բանվորական կուսակցութեան անբաժան մասն է, նրա սեկցիան: Այդպես է կոմունիզմի առաջնութեանցութեան որենքը»:

Շեշտելով նույն այդ միտքը մի այլ տեղ, ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանը նկատում է դարձյալ.—

«Ապրել Ամերիկայի և Յեվրոպայի խորշերում, նրանց պրոլետարիատի ծոցում և սերակերպով չը կապվել նրա հետ, չտարվել նրա միջազգային կովով—դա անկարելի յէ, դա անհնար է:

Այստեղ է, վոր մենք պետք է ասենք մեր հակառակորդներին. — վոչ, պարոններ, մենք չպետք է մտածենք այն «հյուրասիրութեան» մասին, վոր անում է գաղթականութեանը հենց Հունաստանը, հենց Ամերիկան: Դա փարիսեցութունն է, վոր դուք քարոզում եք:

Չկան տերեր և հյուրեր:

Մենք, այսպես կոչված հյուրերս, պետք է ձեռք ձեռքի տանք տեղական բանվորութեան, միանանք միջազգայնական գաղափարներին և Յերրորդ Ինտերնացիոնալի դրոշակների տակ դուրս գանք ընդհանուր թշնամու դեմ:

Այսպես է լինելու բոլոր գաղութահայ բանվորների, դյուղացիների և առհասարակ աշխատավորների տակտիկան» (եջ 134 - 135):

Այսպիսի գործելակերպը—անհրաժեշտ պայմանն է գաղութահայ աշխատավորների, յերեկվա դաշնակ կամ հնչակ բանվորի կողմից յուրացնելու կոմունիզմի այբուբենը և ազատագրելու նրա միտքն ու սիրտը այն պանարմենիստական թուլնից, վորով հիմնավորապես վարակված և արեւմտահայ կամ գաղութահայ մասսան:

## ՅԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԳԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

(«Գաղութահայ խնդիրներ»)

1

Գաղութահայ մեր քաղաքականութեան նշուման կարեւորութեանը գիտակցվում է մեր շատ ընկերների կողմից:

Այդ խնդրին եր նվիրված ընկ. Ա. Մարտունի-Մյասնիկյանի վերջին աշխատութեանը—«Կուսակցութեանները գաղութահայութեան մեջ», վորի մասին խոսեցինք իր ժամանակին մեր թերթի եջերից:

Այդ նույն հարցն է շոշափում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր վերջին բրտշուրում — «Գաղութահայ խնդիրներ»\*)— վորի վրա հարեանցիորեն ակնարկել էյինք մեր հոգվածներից մեկում և խոստացել դառնալ մանրամասն և լրիվ (տես «Կոմունիստ» № 73—1925 թ. սպրիլ—«Հասունացած պահանջ» թերթումը) ավելի ազատ ժամանակին:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը նկատում է—նույնը ավելի տուշ պնդում էր ընկ. Ա. Մյասնիկյանը իր գրքույկում,— վոր գաղութահայ խնդիրները առաջնակարգ հետաքրքրութեան են ներկայացնում մեզ

\*) Աշոտ Հովհաննիսյան. «Գաղութահայ խնդիրներ»—Յերեան, 1925, պետական հրատարակութեան, գինը 15 կ.:

համար: Ընկ. Ա. Մյասնիկյանը գտնուում էր, թե չի կարելի աչքաթող անել արտասահմանյան գաղութների աշխատավորությունը, քանի վոր (եջ 6) —

«մեր յերկրի սահմաններից գուրս սպրուում է ալելի հայություն, քան ներսում»:

Ծանոթանանք մի փոքր մտալից, վորքան թույլ են տալիս մեր թերթի սուղ եջերը, թե ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր բրոշյուրում —

— Ինչ խնդիրներ է դնում,

— Ինչ մտահցում ցուցադրում,

— Ինչ լուծումներ առաջարկում

գաղութահայ աշխատավորությանը և մեզ շահագրգիսող այդ կարևոր հարցերում:

Տեսնենք, թե վորքան նրա դիպնոցը հետևանք է գրության ճիշտ պատկերացումի և ղեղատումը, մեր հետապնդած գաղափարներից ու նպատակներից բղխող:

«Գաղութահայ խնդիրներ»-ի ընկեր-հեղինակը — Ինչպես ամեն մի հայ կոմունիստ — առանձին քաղցր դպացմունքներ չի տաժում դեպի գաղութահայ բուրժուազիան: Նա կողմնակից է նրա դեմ անհաշտ պայքարի: Բայց գաղութներում կան — ըստ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի արտահայտության — հիմնական յերկու խնդիր, վորոնց համար նա պատրաստ է բանակցել աշխտեղի նույնիսկ արտոնյալների հետ: Վորոնք են այդ հիմնական խնդիրները: Թողնենք թվելու ընկ.-հեղինակին (եջ 9/10). —

«Խնդիրներից առաջինը — գաղութներում սլանված ազգային գույքերի ու բարեգործական գումարների հարցն է:

Յերկրորդը — գաղթականության և վորբության հարցը»:

Ընդգծումները բնագրինն են:

Այդ յերկու հիմնական հարցերից գուրս ուրիշ վնչ մի հարց չի գտնում գաղութներում մեզ հետաքրքրող ու հուզող: Յեվ «Գաղութահայ խնդիրները» բրոշյուրի բոլոր քսան — քսանհինգ եջերը, այսինքն ամբողջ գրքույկը նախնախնայաբար և սաշտպանելու մի կողմից թորհրդային Հայաստանի իրավունքները գույքերի կամ — Ինչպես մի այլ տերմինով նույն միտքն է ձևակերպում ընկեր-հեղինակը — Ֆոնդերի վրա, մյուս կողմից ստեղծելու մի տեսակ «մասսայական ճնշում» գաղութահայ բուրժուազիայի վրա արդարացնելու մեր ակնկալիքները (դարձյալ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի բառն ու միտքն է) արտասահմանյան գաղութներից, «վողի քսակը» (եջ 18) դեռն անելու:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը փորձում է ապացուցել իր բրոշյուրով չը գիտենք ում, թե (եջ 7). —

«Գաղութներում կան տակավին ազգային գույքեր և ֆոնդեր, վորոնց միակ իրավատերն է, անշուշտ, թորհրդային Հայաստանը: Գաղութներում գանձվում են բարեգործական և այլ կարգի նյութական արժեքներ, վոր այս կամ այն չափով կապված են թորհրդային Հայաստանի անվան հետ:

Մեր այդ իրավունքների պաշտպանությունն ու դրանց հետ կապված ակընկալությունների կենսագործումը պայմանավորված է մեծապես գաղութահայ մասսաների և նրանց կազմակերպությունների վարելիք պայքարի հետ:

Այս է, վոր պե՛տք է շե՛տե՛նք մե՛նք հիմա, ամե-  
նից առաջ յե՛վ ամե՛նից շատ»:

Ընդգծումները դարձյալ բնագրինն են:

Յե՛վ պետք է խոստովանել, վոր ի՛ր բրոշյուրում  
ընկ. Աշոտ Հովհաննիսյանը բազմաթիվ անգամ է ա-  
մեն առիթով (տես եջ 5, 7, 17, 18, 19, 20, 21) շեշ-  
տելով գառում է նույն այդ մեր անկախիքներին և մեր  
իրավունքներին, ըստ ամենայնի պատճառաբանելու, թե  
արտասահմանյան հայ գաղութներում կատարվելիք  
աշխատանքների ալֆա և ոմեգան հիշած «հիմնական  
յերկու» կամ ֆոնդային-բարեգործական կետերի մեջ  
պետք է փնտաւել:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը այսպես դնելով և  
մտանալով խնդիրներին, բնականաբար համապատաս-  
խան կազմակերպչական սխառեմ է առաջարկում: Նա  
դժգոհ է արտասահմանյան Հոկ-երի դրժուներթյու-  
նից: Իսկապես դո՛հ լինելու յե՛լ առանձին առիթ հու-  
նի, քանի վոր յերեք-չորս տարում հազիվ մի յերեք  
հարյուր հազար ուրբի յե ժողովվել, թեև յերեք հարյուր  
անգամ յերեք հարյուր հազար աղմուկ ու թմբուկ է  
հարվել: Այդ վողորմելի դրոշները և նրա շուրջը ստեղ-  
ծած դաժնազա՛ն ու ցերեմոնիան միաժամանակ հնարա-  
վորություն են տվիլ գաղութահայ բուրժուազային  
մի տեսակ կոնսոլիդացիայի (ընկ. Աշոտ Հովհաննիս-  
յանի բառն է) յենթարկելու իր դրությունը գաղութ-  
ների հայ աշխատավորության հանդեպ: Բուրժուազիան  
իրան ճարտիկորեն հանձնարարել է Սորհրդային իշ-  
խանության և բանվորա-գյուղացիական Հայաստանի  
«բարեկամը», համենայն դեպս նախանձախնդիրը նրա  
շահերի և նույնիսկ նրա ինտերեսների (դարձյալ ըն-

կեր-հեղինակի տերմինն է) ներկայացուցիչը գաղութ-  
ներում:

Վհրն է ընկ. Աշոտ Հովհաննիսյանի առաջարկած  
կազմակերպչական նոր սխտեմը, վոր պետք է գա-  
ղութահայ մասսաները մի սոսկալի գրոհի շարժի ար-  
տասահմանյան ֆոնդերի և նրանց սնուցիչների վրա  
նստած հայ բուրժուազիայի դեմ:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, վոր կո-  
մունիզմը և կոմունիստական առորյա պրոպագանդը,  
ինչպես նաև հեղափոխության հաղթանակը կարմիր  
գծից դուրս լավ բաներ են, բայց դրանց համար պա-  
հանջվում են տասնյակ տարիներ (տես եջ 15—16):  
Մինչդեռ ընթացիկ հարցերի, կոնկրետ խնդիրների  
(ընդգծումները «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրինն  
են) լուծման համար նպատակահարմար կլինի հա-  
տուկ կազմակերպություններ ստեղծել:

Ընկեր Աշոտ Հովհաննիսյանը տրամաբանում է,  
թե այդպիսի կազմակերպություն կարող է լինել, թեև  
նա այսօր դեռևս չի, Հոկ-ը արտասահմանում: Բայց  
դրա համար Հոկ-ը միանգամայն «նոր» ձև ու կերպա-  
բանք պիտի ստանա:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը գտնում է, վոր նրա  
հանձնարարած քաղաքականության, այսինքն ֆոն-  
դային-բարեգործական նպատակների (ուրիշ նպա-  
տակ չեք գտնի դուք «Գաղութահայ խնդիրներ»-ի  
մեջ) հասնելու համար (եջ 22). -

«Անհրաժեշտ է, վոր Հուկ-ի ճյուղերը վե-  
րածվեն գաղութահայ մասսայական կազմակեր-  
պությունների: Հուկ-ը պիտի բռնի դպալի չափով  
Յեպիպոստի Բարեգործականի և Հայաստանում

20707

գործող Ամերիկյան Կոմիտեյի տեղը: Ամենից առաջ Հոկ-ը պետք է իր ճյուղերն ունենա հայաշատ այն վայրերում, վորտեղ մինչև այսօր հաստատված է յեղեկ բուրժուական բարեգործական «մեծ խողովակը»: Պետք է վերջ տալ այն զրու-թանք, յերբ ամերիկահայ բանվորության հաշվին գանձվում է ազգային մի գրամագուլուխ, վոր հակաբանվորական նպատակներն համար շահագործում են յեվրոպական հանգստավայրերում նիրհող ազգային մեծատուններն ու նրանց սպասավորները»:

Այսպես ընկ. Աշոտ Հովհաննիսյանը կարծում է, թե յիդիպտական Բարեգործականի ձևով կերտած Հոկ-երը ավելի ազդու և կտրուկ կլինեն հայ մեծատուններն և նրանց սպասավորներն հակաբանվորական նպատակի ու շահագործումի դեմ կովելու, քան նույն գաղութների կոմքիլչները կամ կոմկուսի հայկական սեկցիաները?!

Այդպես պատկերացնելով արտասահմանյան Հոկ-երի դերը, նա հանձնարարում է կարմիր գծից դուրս ընկած Հոկ-երի գործունեությունը հանել Յերևանի Հոկ-ի կենտրոնական վարչության հակոգութունից և ղեկավարությունից, վորովհետև—թվում է Աշոտ Հովհաննիսյանին—մեր Հոկ-ի քայլվածքը շատ է սովորական բարեգործական ընույթ կրում և մասսաներն էլ առանձին սեր ու հարգանք չունին դեպի այստեղի Հոկ-երը, մինչդեռ արտասահմանյան՝ ըստ «Գաղութահայ խնդիրների» ընկ. հեղինակի ձևված Հոկ-երը՝ կլինեն արտակարգ բարեգործական և զաղութահայ աշխատավորությունը իրար գուլուխ կջարդի որ առաջ

նրա «մեծ խողովակում» դատարկելու իր գրպանները!?

Առաջադրած հիմնական բաղաբականությունը հիմնավորապես առաջ մղելու համար ընկ. Աշոտ Հովհաննիսյանը անհրաժեշտ է գանում Յերևանի Հոկ-այլին վարչության ինստիտուտությունից հանված արտասահմանյան Հոկ-երը անմիջական կոնտրոլի տակ առնել: Թե ինչպես, այդ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի գաղանխքն է, վոր պարզարանված չէ «Գաղութահայ խնդիրների» ըրոշյուրում:

Նա միաժամանակ առաջարկում է արտասահմանյան Հոկ-երի կողքին, — վորոնց հանձնարարում է ատատորեն բանալ բոլոր յերկրների «հայաշատ վայրերում» (յերես 22), -- ստեղծել նաև տեղական ընույթի մարմիններ, վորոնք նույնպես մտածեն Սորհրդային Հայաստանի մասին, նման Պարսկաստանի «Հայ Ժողովուրդ» ընկերություն (եջ 24/25):

Ուրեմն, Հոկ-ը կարմիր գծից դուրս մի տեսակ համագաղութային կամ համահայկական կազմակերպություն է, վոր զբաղվելու յե «մեծ խողովակները» կարգի բերելով, իսկ նրանց ոժանդակիչ ու զուգահեռ գանազան անուն տեղական կազմակերպությունները հոգալու յեն «մանր խողովակներն» սանխտարական զրության մասին:

Այսպիսով, ըստ ընկ. Աշոտ Հովհաննիսյանի, արտասահմանյան հայ գաղութները ծածկվում են բազմահարկանի մեծ ու փոքր ֆոնդային-բարեգործական խողովակային ցանցով, նման մեր Բագվի դեպի նավթային բեղերվուարները տանող նավթամուղների ցանցին:

Բայց այդ յերկու կազմակերպություններով չի սահմանափակվում ընկ. Աշոտ Հովհաննիսյանը:

Համար «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում մասնանշված հիմնական յերկու նպատակներին, նա առաջարկում և մեր այդ ազգային-բարեգործական հաստատություններին շողկապվել միջազգային բարեգործական համապատասխան հաստատությունների հետ: Այդպես — թվում և ընկ. Աշոտ Հովհաննիսյանին — ավելի հեշտ կլինի մեզ հասնել յերկու հիմնական խնդրի լուծման, տիրանալ ազգային սունդուկին — ֆոնդերին, գույքերին, քսակին ու խողովակին հային:

Այսպես, ուրեմն, գաղութահայ բարեգործական «մասսայական» կազմակերպության սխեման — ըստ ընկ. հեղինակի — ընդունում և հետևյալ պատկերը. — առաջին հարկը տեղական կազմակերպություններ («Հայ ժողովուրդ» և այլն).

յերկրորդ հարկը — Հոկ-երը՝ ձևված ըստ Յեզիպտոսի Բարեգործականի, վորպես համազգաղութային բնույթի ինստիտուտ.

յերրորդ ետաժր — միջազգային «բարեգործական» տիպի միություն:

Մրանք են լինելու գաղութահայ խնդիրները լուծողները և մեր քաղաքական դժի «ճշտողները»...

Այս վերջինիս միջազգային «բարեգործական» համաձայնության և համագործակցության մասին ընկ. Աշոտ Հովհաննիսյանը տալիս և (էջ 20) հետևյալ իմաստուն խորհուրդները. —

«Գաղութահայ այդ աշխատավորական կազմակերպչական ջանքերն անմիջական նպատակ պիտի

ունենան՝ ընդգրկելու գաղութահայ մասսայի ըստ կարելույն լալն շրջանները և նվաճելու ըստ կարելույն լալն իրավունքներ ազգային բարեգործական ֆոնդերի նկատմամբ:

Այդ հաջողելու համար կազմակերպված աշխատավորությունը չպետք և սահմանափակվի միայն ազգային-կազմակերպչական ու ազգային-քաղաքական ներքին շրջանակներով: Հարարբություն ստեղծելով այս կամ այն կերպ աշխատավորական միջազգային բարեգործական, պրոֆեսիոնալ յեով քաղաքական կազմակերպությունների հետ կամ մոտնելով այդպիսի կազմակերպությունների մեջ՝ գաղութահայ աշխատավորությունը ավելի պիտի ամրացնի իր դիրքը ազգային գործերի բնագավառում»....

Խոսքը այստեղ շարունակ «մասսայականացրած» Հոկ-երի և նման կազմակերպությունների գործունեության «միջազգային» շողկապման մասին և:

Ահա — յերկու խոսքով — այն գաղութահայ քաղաքականությունը, վոր ջերմորեն հանձնարարում և ընկ. Աշոտ Հովհաննիսյանը իր «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում և վորոնք կոնկրետ ու ընթացիկ որվան մեջ պիտի ազատագրեն գաղութների հայ մասսաներին տեղական ազգային ջիւներէից, և — ֆոնդային-բարեգործական մեծ ու փոքր խողովակների ու քսակների բեւանները դարձնեն դեպի Մարբաթյան դաշտը, դեպի իրավունքներէից ու ակնկալություններէից չհրաժարելու իրավունքներէից ու ակնկալություններէից չհրաժարվող Խորհրդային Հայաստանը և — սակ լուսեցին — վոսկեկեկոխ անեն Արագյաղի շվաքի տակ մուրճ ու մանկակին միայն ապավինած մեր ժրտջան աշխատավորին...

Այդպէս ե արդոք կոնկրետ ու ընթացիկ իրականութիւնը և իսկապէս այդպէս ե մտածում մեր կուսակցութիւնը:

Չենք կարծում:

## II.

Սխալվում ե ընկ. Աշոտ Հովհաննիսյանը և սխալվում չարաչար, յերբ իր «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրի մեջ մեր հետապնդելիք գծի առանցքն ե դարձնում ֆոնդերի խնդիրը և հայտարարում, թե մենք նյութական ակնկալիքներ ու սպասելիքներ ունենք ամերիկահայ կամ յեգիպտահայ գաղութներէց, կամ նախանձում ենք այնչափ յեգիպտական Բարեգործականին, վոր ուզում ենք մեր արտասահմանյան Հոկ-երը վերաձեւել նրանց տարազով և մի-մի «մեծ խողովակ» ել անցկացնել դեպի այդ «խորհրդայնացրած» բարեգործական կազմակերպութիւնները:

Մենք ընդհանրապէս ընկ. Աշոտ Հովհաննիսիանի չափ «կենսարար» նշանակութիւն չենք տալիս բարեգործական սխառններին և վոչ ել ավելի լավ կարծիքի յենք Նուբար-փաշաների ու Ազաթոնների հաստատութիւն մասին՝ քան մեր Բագրատ Նավասարդյանների և Սամսոն Հարութիւնյանների առանձին ծնած և միացյալ վիժած «կովկասի հայոց բարեգործական ընկերութիւն»:

Դրանք—կիվկիվ-բուրիքո յեն: Թեկուզ ընկ. Աշոտ Հովհաննիսիանի ծեսի մկրտած Հոկ-երը չեն կարող տալ ավելի՛ քան ավել են մինչև այժմ: Մանավանդ նրանք բնավ չեն կարող մեզ ողտակար լինել տանուց-

տանու իրավական խնդիրները լուծելու, վորպիսին և գերազանցապէս ֆոնդային հարցը:

Միամտութիւն և կարծեք թե Հոկ-ական կազմակերպութիւնները—յենթադրենք իսկ մի բոպե—«մասսայականացնելով» կարելի յե հարկադրել գաղութահայ բուրժուազիային բացել այն ազգային սընդուկի բերանը, վորի ծայրը պինդ սեղմած ունին ձեռքին նրանք:

Փոնդի խնդիրները լուծվելու յեն վոչ թե ընկ. Աշոտ Հովհաննիսիանի կարծեցյալ «մասսայական» ճնշմամբ, այլ յերկու կերպ.—

— կամ իրավական, դատական-պետական ճանապարհով հարկադրել Սորհրդային Հայաստանին պատկանող գումարները հանձնել մինչև այժմ հայ բուրժուայից անտեսված միակ ափսոջը:

— կամ փոխադարձ համաձայնութիւն գալով մեր իրավունքների ուղուբառորների հետ, վորոնք նստած են այդ վոսկերեր քսակների ու խողովակների վրա:

Մենք շատ մեծ թերահավատութիւն ենք վերաբերվում վերջին հնարավորութիւն: Հենց ինքը ընկ. Աշոտ Հովհաննիսիանն ել կարծես նույն կարծիքի յե, վորովհետև նա փորձում ե ամբողջ մի «հեղափոխութիւն» մտցնելով արտասահմանյան Հոկ-ական կազմակերպութիւն մեջ, հարձակողականի անցնել Հոկ-ական «աշխատավորութիւն» ֆոնդերի բերանին նստած բուրժուազիայի դունչը ջարդելու...

Գաղութահայ բուրժուազիան—միջազգային բուրժուազիայի աջակցութիւնը և քանի դեռ վերջինիս դրութիւնը հարկավոր չափով խախտված չե նաև կար-

մեր գծից դուրս—կզիջի մեզ ֆոնդերի փորրիկ մասը՝ պայմանով վոր մենք ստանձնենք վորբերի ու գաղթականների ծանրութեան կրկնակի ու յերրակի մասը: Այս գեղքում ֆոնդերի խնդիրը—պարզապես առեարական կոմրինացիայի ու սղելկայի հարց է: Այս էլ կանխապես ասենք, վոր նման առեարական սղելկաների ժամանակ խարվող կողմը միշտ մենք ենք լինելու, վորովհետև մենք վերին աստիճանի զգայուն ենք յեղել և կլինենք բնականաբար գեպի մեր գաղթականութեան ցափերը:

Բայց կրկնում ենք, մենք ֆոնդերի այսպիսի լուծման վրա առանձին հույսեր չենք տածում:

Մենք միանում ենք կարծեմ անցյալ տարի—«Խորհրդային Հայաստանի» եջերից արտահայտած այն կարծիքին, թե ֆոնդերի հարցը պիտի բարձրացնել իրավական-դատական ուղղութեամբ:

Յերբ Խորհրդային Միութեան միջազգային գրութեանը հարկավոր չափով կոնսուլիդացիայի կենթարկվի և մենք հնարավորութեան կունենանք մեր արտաստանյան ֆոնդակեր բուրժուաների հետ խոսել դատատանական պրիստավի և կատարողական թերթի լեզվով—ապա ինքնին կլուծվի բոլոր այն գումարների հարցը, վորոնց իրավատերն է Խորհրդային Հայաստանը: Մինչ այդ՝ մենք ապարդյուն ենք համարում և նույնիսկ փրատակար մեր գծի համար, ֆոնդերի մասին ընկ. Աշոտ Հովհաննիսյանի չափ կրքոտ ու չափից ավելի «սեփականատիրական» վրձով վիճարանին ու պատճառաբանելը, վորովհետև դրանից վնչ միայն վոչինչ չի դուրս գա, այլև կատեղծվի այնպիսի վոչ-ցանկանալի տպավորութեան կարմիր գծից դուրս, թե

խկապես մենք նյութական վորեի ակնկալութեան կամ լուրջ սպասելիքներ ունենք գաղութներէ: Մինչդեռ իսկապես մենք նյութական վնչ ակնկալութեաններ և վոչ էլ սպասելիքներ չենք կապում գաղութահայ մեր քաղաքականութեան հետ:

Ընկ. Ա. Մյասնիկյանը իր «Կուսակցութեանները գաղութահայութեան մեջ» գրքույկում ընդգծել է մեր ընդգրկած քաղաքական գծի նյութական-ֆինանսատկան անշահախնդրութեանը:

Նա գտնում է, շատ ճիշտ կերպով, վոր մեր բանակցութեանները գաղութահայ բուրժուազիտայի հետ պարզապես պայմանագրութեան խնդիր է և վնչ թե ֆոնդային վեճի, ինչպես կարծում է ընկ. Աշոտ Հովհաննիսյանը:

Ընկ. Մյասնիկյանը նկատում է (եջ 22) իր «Կուսակցութեանները գաղութահայութեան մեջ» գրքույկում. —

«Յեթե արտաստանում կան հայ հարուստներ, վորոնք ուզում են Հայաստանում շահեցնել իրենց դրամները, ճահիճները չորացնել և առուներ անցկացնել, թող անեն: Չե՞ վոր դա պայմանագրութեան հարց է, ոեալ գործի է հաշվի խնդիր է: Յուրաքանչյուր խորհրդային յերկիր պատրաստ է կապիտալիստներին կոնցեսիաներ տալու»:

Ահա սա յե ճիշտ մոտեցումը և լուծումը խնդրի միանգամայն համապատասխան մեր տեսակետներին:

Գաղութահայ բուրժուազիտայի հետ պետք է խոսել պայմանագրութեան լեզվով: Այլ լեզու չի համապատասխանի խորհրդային յերկրի, այդ թվում և

Խորհրդային Հայաստանի շահերին բուրժուազի-  
հետ բանակցելիս և հաշիվներ տեսնելիս: Մինչդեռ  
ընկ. Աշոտ Հովհաննիսյանը միամտություն ունի կար-  
ծելու, թե՛ իր առաջարկած ձևով մկրատած և ընկ.  
Աբամայիս Յերզնկյանի կամ ընկ. Գրիգոր Վարդան-  
յանի վառվառն ճառերով վողերոված Հոկ-ական դա-  
դութահայ «մասսաներով» կարող կլինի չոքացնել մեծ  
ու փոքր Նուբար-փաշաներին և նրանց սպասավոր-  
ներին...

Ցնորք: Հոկ-ական բոմանտիզմ!

Մի շատ խոշոր սխալ է անում և մեր ընդգրկած  
ու ընդգծած ընթացքից շեղվում, յերբ ընկ. Աշոտը  
այդքան համառորեն պնդում է մեր նյութական ակն-  
կալիքների ու սպասելիքների վրա:

Գաղութահայ աշխատավորությունը պիտի իմա-  
նա և մենք, ընկ. Աշոտ Հովհաննիսյանն էլ մեզ հետ,  
պարտավոր ենք ամեն անկյունում շարունակ կրկնել  
— Աթենքից մինչև Փարիզ, Ալեքսանդրիայից մինչև  
Փրեզնո ու Լոս-Անջելոս — ամենուրեք լսելի անելու մեր  
ձայնը, վոր Խորհրդային Հայաստանը վոչ մի նյու-  
թական ակնկալություն չունի յեվ Ֆոն դե Երի համար  
չե, վոր հետաքրքրվում է գաղութահայ կյանքով:

Դաշնակցականները մեր դեմ պայքարելիս շա-  
րունակ կրկնում են, թե զանազան հնչյուն գումարնե-  
րի փայլիցն է, վոր մենք սիրում ենք հիշել կարմիր  
գծից դուրս հայ գաղութները: Ընկ. Աշոտ Հովհաննի-  
սյանի բրոշյուրը մեր թշնամիներին դենք և տալիս:

Ընկ. Ա. Մյասնիկյանը առարկելով դաշնակցական  
այդ զրպարտության դեմ, գրում էր իր վերը հիշված  
աշխատության մեջ (եջ 21) շատ պարզ ու վորոշ.—

«Վոչ, պարոնայք դաշնակցականներ: Փո-  
ղային հաշիվներով զրազվեցեք դուք: Դա ձեր  
փեշակն է: Իսկ Խորհրդային Հայաստանի մասին  
ասացինք, վոր ևա չունի նյութական ակնկալու-  
թյուն դրսից: Նրա հույսը իր բազուկներն են, իր  
աշխատանքն է: Խորհրդային Հայաստանը  
բանվոր-գյուղացիական յերկիր է»:

Ահա մեր գաղութահայ քաղաքականության հա-  
րազատ զիծն ու նիշտ հասկացողությունը:

Այնքան ավելի ցավալի յեն ընկ. Աշոտ Հովհան-  
նիսյանի թյուր և վերը մատնանշված մեր գծին հակա-  
սող կարծիքները «Գաղութահայ ինդիւրներ» բրոշյու-  
րում, վոր վերջինս լույս է տեսել 1925 թվին, իսկ  
ընկ. Ա. Մյասնիկյանի գիրքը 1924-ին, և կարմիր  
գծից դուրս կարող է կազմվել սխալ կարծիք, իլյու-  
զիտ, թե մենք հրաժարվել ենք ընկ. Ա. Մյասնիկյա-  
նի վերը ճիշտ ձևակերպված անշահախնդիր քաղա-  
քականությունից հանդեպ գաղութային աշխատավո-  
րության և իրր վերաբննում ենք այն:

Սխալ գնելով և մոտենալով հարցերին, ընկ. Աշոտ  
Հովհաննիսյանի առաջարկած լուծման միջոցները ան-  
խուսափելիորեն նույնչափ սխալ պիտի լինեյին:

Մեր գործունեյության և ազգեցության հետևանք-  
ներից մեկն էլ գաղութներում այն պիտի լինի, վոր  
տեղական աշխատավորական մասսաները գատտաբա-  
վեն նոր ուղղությամբ, այսինքն ազատագրվեն ազ-  
գայինջիական մասձեղակերպից ու գործեղակերպից,  
սերտ կապ հաստատեն տեղական միջազգային բան-  
վորական, վոր մեզ համար սակ և կոմունիստական  
միջավայրի ու կազմակերպության հետ:

Սա մեր հիմնական անկիւնքներից է գաղութներում:

Դաշնակցութունը շարունակ աշխատել է գաղութային աշխատավորական մասսաները աշխատիս՝ իրենց համար վտանգավոր շփումից ու ազատագրումից հեռու պահել: Ընկ. Ա. Մյասնիկյանը այդ մեկուսացման դեմ նախադպրուշացնելով, գրում է (եջ 126). —

«Այն ժամանակ, յերբ Դաշնակցութունը հեռու չէ պահում իրան տեղական աշխատավորությունից, հայ աշխատավորները չեն կարող ապրել ու զարգանալ առանց յեզրայրական կապի և բարեկամական սփնտթյան, վոր նրանք ստանում են ու տալիս են տեղական պրոլետարներին»:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը բնավ խկի մտացել է իր «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրում, թե գոյություն ունին բոլոր յերկրներում կոմունիստական կուսակցություններ և նրանց յենթակա հոյկական բջիջներ կամ կոմկազմակերպություններ, թե նրանք են մասսայական աշխատանքների ըազան: Դրա փոխարեն նա մի բոմանտիկ ծրագիր է առաջարկում, մի ինչ-վոր շփոթ բարեգործական կազմակերպություն՝ յեռահարկանի—տեղական, Հոկ-ական, միջազգային—վերը պիտի վարի մասսայական աշխատանքներ և պատվար ծառայի բուրժուազիայի հակաբանվորական նպատակներին:

Ընկ. Աշոտ Հովհաննիսյանը հանձնարարում է մեր գաղութային մասսաները իր մեջ պարփակող կազմակերպություններին սերտ կապ հաստատել (եջ 20)

«այս կամ այն կերպ աշխատավորական միջազգային բարեգործական, պրոֆեսիոնալ և բաղաբական կազմակերպությունների հետ կամ մտնել այդպիսի կազմակերպությունների մեջ»... Կազմակերպչական այս ինչ սոււրբ է:

Ինչ է վերջապես լինելու Հոկ-ը կարմիր գծից դուրս: Ինչ կը նշանակի մտնել այս կամ այն կերպ աշխատավորական վնչ միայն «բարեգործական» բնույթի կազմակերպության մեջ, այլև պրոֆեսիոնալ և բաղաբական...\*)

Հոկ-ական կազմակերպությունները, — մի բույն յենթադրենք, թե իրականացան ընկ. Աշոտ Հովհաննիսյանի և ընկ. Գրիգոր Վարդանյանի յերազները, — դառնալով «մասսայական» կազմակերպություն, ուրեմն՝ նրանց թույլատրվում է բաղաբական կոմբինացիայի մեջ մտնել Յերկրորդ Ինտերնացիոնալի կամ պրոֆեսիոնալ կապ հաստատել Ամստերդամի հետ, հա: Չե՞ վոր թե մեկը և թե մյուսը ավելի քան «այս կամ այն կերպ աշխատավորական» մարմիններ են?!

Մենք չպառեցինք ընկ. Աշոտ Հովհաննիսյանի մտքերի շփոթը՝ բայց բավականանաք այսքանով «Գաղութահայ խնդիրներ» բրոշյուրը մասին, վոր ամբողջապես մի չմարտած մտքի հակասական ու անհետեղական մետաֆիզիկ խորհրդածություններ են:

Այդ բրոշյուրը բնավ չի լուծել վորեւ խնդիր, բայց հիմնավորապես խճճել է հարցեր, և վայ մեզ,

\*) Մի փոքրիկ նկատողություն. սխալ է «ամերիկահայ կոմունիզմ» և այլ նման դարձվածքներ: Չկա ամերիկահայ, ուսումնասիրող, առհասարակ կամ արևմտահայ կոմունիզմ: Կա մի կոմունիզմ:

յեթե նրա արտասահմանյան ընթերցողի ձեռքը միա-  
ժամանակ չի ընկել ընկ. Ա. Մյասնիկյանի գաղու-  
թային հարցեր շոշափող աշխատութիւնը:

Մեր դիժը հետեյալն է.—

«Խորհրդային Հայաստանը,— գրում է ընկ.  
Ա. Մյասնիկյան իր գրքում (էջ 7),— մեծ հետա-  
քրքրութիւն է առաջ բերում մեր գաղութներում.  
Վերջիններս նույնպէս զբաղեցնում են Հայաս-  
տանի բանվորի և գյուղացու միտքը: Միմիայն  
դաշնակցականների նման մարդիկ ընդունակ են  
այդ յերևույթը հիմնավորել նյութական բա-  
րիքնետով և սպասելիքներով: Թող մեկ ընդ-  
միշտ իմանան նրանք, Վոր Խորհրդային Հայաս-  
տանը արտասահմանից նյութական սպասելիք-  
ներ չունի, նրա սպասելիքն այն քաղաքական ու  
հասարակական համակրանքն ու համերաշխու-  
թիւնն է, Վորը հավատացած ենք՝ թե ունի և  
պիտի ունենա այսուհետև գաղութահայ աշխա-  
տավորութեան մեծագույն մասը, Վորը աշխատա-  
վորութիւնը՝ դեպի պրոլետարատի կոմունիս-  
տական հեղափոխութիւնն ու խորհրդային կար-  
գերը:

Այստեղ և թաղված, յեթե կուզեք, մեր  
շահագրգռութեան աղբյուրը, մեր և գաղու-  
թահայութեան միջև յեղած կապի հանգույցը:


Ահա թե ինչու մենք շարունակ վերադառ-  
նում ենք այն հարցին, թե յուրաքանչյուր բողոք  
ինչ է կատարվում գաղութահայութեան խորշե-  
րում, վերլուծում ու քննում ենք անցուղար-  
ձերը...

Բայց և վերլուծութիւնը չպետք է կրի  
մակերեսային բնույթ, նա չպետք է բավակա-  
նանա թեթև ակնարկներով, վորակումներով և  
յերկրորդ կարգի դիտողութիւններով»:

Կարծես միայն դաշնակցականների համար չեն  
գրված այս տողերը: Մեզ էլ է հարկավոր ականջին ող  
գարձնել այս ճշմարտութիւնը:

Ընկ. Մյասնիկյանի այս պնդումները մնում են  
իրենց կատարյալ ուշժի մեջ և պիտի շարունակեն  
այսուհետև ևս ուղղեցույց ծառայել մեր քաղաքակա-  
նութեան՝ գաղութային խնդիրները լուծման ժա-  
մանակ:

Մեր կուսակցական-խորհրդային գծի կոնսոլի-  
դացիային բնավ չի նպաստելու ընկ. Աշոտ Հովհան-  
նիսյանի այդ բրոշյուրը:



## ԲԱԼՇԵՎԻԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

### ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Հեղափոխական եմիգրացիայի յեւ ռուսանդութեան անցյալից (մի և՛ Ստ. Շահումյանի յեւ Բողղան Կնունյանի գործունէութիւնից) . . . . . 25 կ.
2. Սուրեն Սպանդարյան . . . . . 25 »
3. Յերկու տեսակետ զաղութահայ խնդիրներում 25 »
4. Արշակ Զուրարյան . . . . . 25 »

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.